Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 24-ի նիստի N 36
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը և մոտավոր չափը	Պատասխանատու կատարող	Համակատարող	Վերստուգելի չափանիշը
1	2	3	4	5	6	7	8
1.	Մանկապատանեկան մարզադպրոցների համար օրինակելի կանոնադրության մշակում	Մանկապատանեկան մարզադպրոցների համար օրինակելի կանոնադրության մշակում (համապատասխան իրավական ակտի մշակում և ընդունում)	2017 թ. օգոստոս-սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մանկապատանեկան մարզադպրոցների համար կառավարման միասնական մոդելի ներդրում
2.	Մարզիչների որակավորման կարգի և չափորոշիչների մշակում	Որակյալ մասնագետների ընդգրկում, մասնագիտական գիտելիքների զարգացում, ուսումնական ծրագրերի իրագործման արդյունավետություն (համապատասխան իրավական ակտի մշակում և ընդունում)	2017 թ. սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Միասնական ուսումնական ծրագրերի առկայություն
3.	Մանկապատանեկան մարզադպրոցներում բժշկական անհրաժեշտ դեղորայքային և գույքային ցանկի սահմանում	Մարզիկների բժշկական սպասարկման որակի բարձրացում (համապատասխան իրավական ակտի մշակում և ընդունում)	2017 թ. նոյեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Մարզիկների առողջական վիճակի բարելավում

1	2	3	4	5	6	7	8
4.	Մարզադպրոցի տնօրենի պաշտոնի նշանակման համար չափորոշիչների և մրցութային կարգի մշակում	Պաշտոնում նշանակելու սուբյեկտիվության բացառում (համապատասխան իրավական ակտերի և/կամ գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ իրավական ակտերի մշակում և ընդունում)	2017 թ. նոյեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մարզադպրոցի տնօրենի պաշտոնի նշանակման հարցում միասնական քաղաքականության իրականացման ապահովում
5.	Մանկապատանեկան մարզադպրոցների համար միասնական ուսումնական ծրագրերի մշակում ըստ մարզաձևերի և մարզման փուլերի	Նոր ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում՝ տարեկան 3-4 մարզաձևերի համար	2017 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցների համար միասնական ուսումնական բազայի ստեղծում
6.	Մանկապատանեկան մարզադպրոցների ուսումնական գծով փոխտնօրենների, հրահանգիչ-մեթոդիստների, մարզիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում	Կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում	Շարունակական	ՀՀ պետական բյուջե (ըստ քանակի)	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մանկապատանեկան մարզադպրոցների ուսումնական գծով փոխտնօրենների, հրահանգիչ-մեթոդիստների, մարզիչների մասնագիտական գիտելիքների կատարելագործում
7.	Մարզադպրոցների կառուցվածքի, հաստիքացուցակի օրինակելի ձևի մշակում	Միասնական քաղաքականության ապահովում	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մանկապատանեկան մարզադպրոցների կառավարման միասնական մոդելի ստեղծում
8.	Մանկապատանեկան մարզադպրոցների բժշկական անձնակազմի վերապատրաստման կարգի և չափորոշիչների մշակում	Մարզիկների բժշկական սպասարկման որակի բարձրացում (համապատասխան իրավական ակտի մշակում)	2017-2018 թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Մանկապատանեկան մարզադպրոցների բժշկական անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործում

1	2	3	4	5	6	7	8
9.	«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» № 70-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագծի մշակում և հաստատում	Մարզերի մարզադպրոցների սաների տարին երկու անգամ կանխարգելիչ բժշկական զննումների կազմակերպման գործընթացի կանոնակարգում	2017 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Մարզերի մարզադպրոցների սաների համար կանխարգելիչ բուժզննման իրավական հիմքերի կատարելագործում
10.	Մանկապատանեկան մարզադպրոցներում բարձրակարգ մարզիչների և մարզիկների կողմից ուսուցողական պարապմունքների անցկացում (վարպետաց դասեր)	Գիտելիքների հարստացում, հմտությունների զարգացում	Շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցների մանկավարժների և սաների մասնագիտական գիտելիքների կատարելագործում
11.	Մարզակառույցների, մարզադահլիճների վերանորոգման (այդ թվում՝ ջեռուցման համակարգերի վերնորոգման և կառուցման) նպատակով մասնավոր ներդրողների ներգրավում՝ պետություն-համայնք- մասնավոր հատված գործակցության տարբերակված ձևաչափերի (վարձակալության, համաֆինանսավորման, կոնցեսիայի և այլ տիպի օրինակելի պայմանագրերի) մշակման և գործուն մեխանիզմների ներդրման միջոցով	Նոր, արդի պահանջներին համապատասխան վերանորոգված մարզակառույցների առկայություն	Շարունակական	ՀՀ պետական բյուջե, համայնքի բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ (ըստ նախագծի նախահաշվի)	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մարզակառույցների, մարզադահլիճների շենքային պայմանների բարելավման միջոցով մարզադպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում

1	2	3	4	5	6	7	8
12.	Մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, մարզական հասարակական այլ կազմակերպությունների պետական ֆինանսական աջակցության, ինչպես նաև հանրակրթական դպրոցների մարզադահլիճների մարզական գույքով ապահովման համար հստակ չափորոշիչների, ըստ անհրաժեշտության նաև համամասնությունների մշակում և սահմանում	Անհրաժեշտ մարզական գույքով հագեցած մարզակառույցների առկայություն, հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում անհրաժեշտ մարզագույքի առկայություն	Շարունակական	Համայնքի բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ (700000.0 հազար դրամ)	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույլով ապահովում, հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրայի դասերի որակի բարելավում
13.	Հանրակրթական դպրոցների՝ դասաժամերից դուրս վարձակալական հիմունքներով մարզադահլիճների տրամադրման օրենսդրական և գործնական երաշխիքների նախատեսում և կիրարկում	Մարազադահրլիճներ չունեցող մարզադպրոցների ուսումնական ծրագրերի իրականացում և հանրակրթական դպրոցների արտաբյուջետային հոսքերի ավելացում	Շարունակական	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների միջև համագործակցության ապահովման միջոցով հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների փոխշահավետ գործակցության իրականացում
14.	Պետություն- համայնք- մասնավոր հատված գործակցությունն ապահովելու նպատակով համապատասխան ծրագրերի մշակում և իրականացում	Մանկապատանդկան մարզադպրոցների և մասնավոր գործընկերոջ միջև համագործակցության միջոցով մանկապատանեկան մարզադպրոցների ենթակառուցվածքների ֆինանսավորում, կառուցում, վերանորոգում, կառավարում, պահպանում	Շարունակական	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի բարելավում և ուսումնական ծրագրերի արդյունավետության բարձրացում

1	2	3	4	5	6	7	8
15.	Մանկապատանեկան մարզադպրոցների կողմից ուսումնական հաստատությունների մարզադահլիճների օգտագործման (անվճար) նպատակահարմարության հարցի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում իրավական մեխանիզմների հստակեցում	Պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացում	2017 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մարզադահլիճներ չունեցող ուսումնական հաստատությունների ֆիզկուլտուրայի դասերի պատշաճ ապահովում
16.	Բարձրագույն վարպետության դպրոցի ստեղծման նպատակահարմարության հարցի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում միջոցառումների ծրագրի հաստատում	Բարձրագույն վարպետության դպրոցի ստեղծում (Նպատակահարմարության դեպքում համապատասխան իրավական ակտի մշակում)	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մարզադպրոցների մանկավարժների և սաների գիտելիքների բարելավում
17.	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» և «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում մի շարք դրույթների վերանայում և համապատասխան փոփոխություն և լրացում կատարելու մասին նախագծերի մշակում և ընդունում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և մյուս գերատեսչությունների լիազորությունների, իրավասությունների ու գործառույթների վերանայում և նորովի սահմանում	2017 -2018 թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և մյուս գերատեսչությունների լիազորությունների, իրավասությունների ու գործառույթների հստակեցման իրավական հիմքերի ստեղծում
18.	Մանկապատանեկան մարզադպրոցներում միևնույն ծանրաբեռնվածությամբ աշխատող մարզիչ-մանկավարժների աշխատանքի վարձատրության դրույքաչափերը հավասարեցնելու հարցի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկության նախապատրաստում	Միևնույն ծանրաբեռնվածությամբ աշխատող մարզիչ-մանկավարժների աշխատանքի վարձատրության դրույքաչափերի հավասարեցում	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցներում միևնույն ծանրաբեռնվածությամբ աշխատող մարզիչ-մանկավարժների աշխատանքի վարձատրության հավասար հիմունքների ապահովում

1	2	3	4	5	6	7	8
19.	Սպորտի բնագավառի վարչական վիճակագրական տեղեկատվական համակարգ (ռեգիստր) ստեղծելու և վարելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	Սպորտի բնագավառի վարչական վիճակագրական տեղեկատվական համակարգի (ռեգիստր) ստեղծում	2017 թ. դեկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ (ըստ նախագծի նախահաշվի)	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով սպորտի բնագավառի վերաբերյալ միասնական տեղեկատվական բազայի ստեղծում
20.	Մարզակառույցների շահագործման արդյունավետության բարձրացման և նրանց պահպանման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը որոշելու նպատակով համապատասխան նորմատիվների մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Մարզակառույցների շահագործման արդյունավետության բարձրացման և նրանց պահպանման, սպասարկող անձնակազմի պահանջվող նվազագույն թվաքանակի որոշման, սանիտարահիգիենիկ պայմանների, կոմունալ սպասարկման և շահագործման անվտանգության ապահովման ուղղությամբ նորմատիվների մշակում և հաստատում	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մարզակառույցների շահագործման արդյունավետության բարձրացման և նրանց պահպանման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը որոշելու նպատակով համապատասխան նորմատիվներ սահմանող իրավական ակտերի առկայություն
21.	Մանկապատանեկան մարզադպրոցների մարզախմբերում ընդգրկված պարապողների քանակական, տարիքային, պատրաստականության մակարդակի և մարզումային տևողության ու այլ չափորոշիչների վերանայում	Մանկապատանեկան մարզադպրոցների համապատասխան չափորոշիչների վերանայում	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցների մարզախմբերում ընդգրկված պարապողների քանակական, տարիքային, պատրաստականության մակարդակի և մարզումային տևողության ու այլ չափորոշիչների միասնական իրավական դաշտի առկայություն

1	2	3	4	5	6	7	8
22.	Բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մարզական ակումբների ստեղծում	Ուսանողական սպորտի զարգացման համար պայմանների ստեղծում	2017 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սպորտի մասսայականացման ապահովում
23.	Բնակչության ֆիզիկական դաստիարակության ծրագրային և նորմատիվային համակարգի մշակում	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացում ու զարգացում	2017-2018 թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացմանը ուղղված իրավական ակտերի առկայություն
24.	Մանկապատանեկան մարզադպրոցների շահագործման սանիտարական կանոնների և հիգիենիկ նվազագույն նորմերի մշակում	Մանկապատանեկան մարզադպրոցներին ներկայացվող հիգիենիկ պահանջների կանոնակարգում	2018 թ. օգոստոս-սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Մանկապատանեկան մարզադպրոցների շահագործման սանիտարական կանոնների և հիգիենիկ նվազագույն նորմեր սահմանող իրավական ակտերի առկայություն
25.	Մանկապատանեկան մարզադպրոցներում ուսումնամարզական գործընթացի կազմակերպամն մեթոդական ձեռնարկներ՝ ըստ մարզաձևերի, մարզաձևերի զարգացման միջազգային փորձի ուսումնասիրություն, մարզման նորագույն մեթոդիկայի տեղայնացում և ներդնում	Ուսումնամարզական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում, միասնականության ապահովում	2018 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, շարունակական	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Մանկապատանեկան մարզադպրոցներում ուսումնամարզական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում՝ ժամանակակից մեթոդական բազայի ստեղծման միջոցով